Սեպտեմբերի 25-ին Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում տեղի կունենա «ՍՊՈՐՏ ԿԱԲ» գիտահետազոտական նորարարական կենտրոնի բացումը:

Եզակի սարքավորումներով հագեցած կենտրոնը ստեղծվել է Համաշ-խարհային բանկի համաֆինանսավորմամբ, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում մասնագիտական կրթության արդիականացում և բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Կենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը ներկա կգտնվեն ՀՀ Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը, ՀՀ Առող-ջապահության նախարար Արսեն Թորոսյանը, ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Լևոն Վահրադյանը, ինչպես նաև՝ բարձրաստիճան հյուրեր Համաշխարհային Բանկի հայաստանյան գրասենյակից: